

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԱՐԻՔԵԿՅԱՆ ԷԼՅԱ ՀՐԱՉՅԱՅԻ**

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈՐԱՅ» ԵՐԿԸ**

**ԻԵ.00.01 «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական և բանասիրական  
գիտությունների  
դոկտոր  
Ա. Ս. Սահակյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Է.-Մ. Ս. Շիրինյան

պատմական գիտությունների թեկնածու  
Լ. Ս. Թումանյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ հնագիտության և  
ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. ապրիլի 8-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈՅ-ի Աստվածաբանության 068 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մարտի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Յ. Բալյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

### ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Եռամեծ վարդապետ», «Երկրորդ Լուսավորիչ հայոց և աստվածաբան» և «սոխեզերալույս վարդապետ» հռչակված Գրիգոր Տաթևացին հայ միջնադարյան այն աստվածաբան-փիլիսոփա մատենագիրներից է, ում անունը մեկընդմիջտ մնաց սերունդների հիշողության մեջ: Գրիգոր Տաթևացու «Լուծումը Յոթայ» երկի համակողմանի վերլուծությունը, դրան առնչվող պատմական բնագրերի, նախորդ դարերի նույնանուն մեկնությունների և լուծումների հետագա ազդեցությունների համակողմանի ուսումնասիրությունը նոր էջ է բացում Հայ եկեղեցու աստվածաբանական մտքի պատմության մեջ: «Յոթնալույս վարդապետի» գրական ողջ ժառանգությունը՝ որպես ամնար ջահ, լուսավորեց և պայծառ պահեց Հայ եկեղեցու ճշմարիտ դավանությունը, ամրացրեց նրա հիմքերը: Ապրելով մեր պատմության ամենամռայլ ժամանակներում՝ նա կարողացավ հսկայածավալ ժառանգություն թողնել և միջամուխ լինել իր ժամանակի թե՛ քաղաքական, թե՛ եկեղեցական և թե՛ հասարակական կարևորագույն խնդիրներին:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծումներից առնչվող անտիպ ձեռագրական, հրատարակված պատմական, աստվածաբանական և մեկնողական բնագրերի համակողմանի վերլուծումը, դրանցում առկա փոխհարաբերությունների, նմանությունների ու տարբերությունների վերհանումը, որոնց շնորհիվ լուծում են գտնում մի շարք հարցեր: Այսու, ձեռնամուխ լինելով նշյալ գրվածքի պատմագիտական, աղբյուրագիտական և աստվածաբանական վերլուծությանը՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Նորովի անդրադառնալ Գրիգոր Տաթևացու կենսագրական տվյալներին, գիտամանկավարժական գործունեությանը՝ հիմք ընդունելով միջնադարյան անտիպ և տպագրված տարբեր աղբյուրներ:
- ԺԴ-ԺԵ դարերում կերտվող հայոց պատմության և կրթամշակութային կյանքի լույսի ներքո քննել Տաթևացու մատենագրական ժառանգությունը՝ որպես մեկնողական դպրոցների ավանդույթների շարունակություն:
- Կազմել Գրիգոր Տաթևացուց մեզ հասած Հոբի գրքի լուծումների ձեռագրերի ցանկը:
- Հոբի գրքի լուծումների քննության միջոցով ներկայացնել Գրիգոր Տաթևացու աստվածաբանական հայացքները:
- Հետազոտել նախորդ մեկնիչների թողած ազդեցությունը նշյալ լուծումների վրա՝ կատարելով համադրական-քննական վերլուծություն:
- Կատարել լուծումների բովանդակային մանրակրկիտ վերլուծություն՝ շեշտելով դրանում արժարժվող հատկապես աստվածաբանական հարցերի շրջանակը, նաև պարզաբանել փիլիսոփայական, լեզվաոճական որոշ խնդիրներ:
- Անդրադառնալ լուծումների՝ հետագա դարերի նույնանուն մեկնությունների վրա թողած ազդեցությանը:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմաբանասիրական, պատմաքննական և համադրական-վերլուծական մեթոդներով՝ առկա

ծեռագրական նյութի, հրատարակված սկզբնաղբյուների և ուսումնասիրությունների համադրման ու վերլուծման ճանապարհով:

### **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱՎԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ**

Ժամանակագրական տեսակետից ատենախոսությունն ընդգրկում է հիմնականում V դարից (Յոթի գրքի՝ Իսիքիոս Երուսաղեմացու մեկնության հայերեն թարգմանության շրջան) մինչև XVIII դարն (Պետրոս արք. Բերդումյանի և Պողոս Տյուրիկեցու երկերի ստեղծումը) ընկած ժամանակաշրջանը: Գրիգոր Տաթևացու երկում օգտագործված աղբյուրներին անդրադառնալիս կատարվել են որոշակի ժամանակագրական շեղումներ:

### **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՎԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՈՒՎԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության էջերում հայագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են Յոթի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքը և դրան առնչվող անտիպ և հրատարակված բնագրերը, ի մի են բերվում նրանում տեղ գտած աստվածաբանական-դավանաբանական հարցերը, համեմատվում Յայ և Ընդհանրական եկեղեցիների մատենագիրների նույնանուն մեկնությունների հետ: Վերհանվում են թեմային առնչվող հետևյալ գիտական նորույթները.

- Ճշգրտվել է Գրիգոր Տաթևացու մահվան տարեթիվը:
- Աշխատության մեջ առաջին անգամ կատարվել է Յոթի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքի աստվածաբանական մանրամասն վերլուծությունը:
- Ճշտվել են լուծմունքի վրա նախորդ մեկնիչների երկերի թողած ազդեցությունը և օգտագործված աղբյուրները:
- Կազմվել և ի մի է բերվել Գրիգոր Տաթևացու՝ խնդրո առարկա երկի ծեռագրային միավորների ցանկը:
- Առաջին անգամ համադրական քննության միջոցով վերհանվել են գրվածքի ազդեցությունները հետագա դարերի նույնանուն անտիպ մեկնությունների (Պետրոս արք. Բերդումյանի և Պողոս Տյուրիկեցու երկերի) վրա:
- Հայտնաբերվել է Յոթի գրքի՝ Որոգինեսի մեկնության *պատճառ*-ը (մեկնողական բնույթի ժանր, որը ներածության, նախամուտքի դեր է կատարել մեկնողական երկերի համար), նաև՝ մեկնությունից հատվածներ, որոնց շնորհիվ պարզվել է, որ Որոգինեսի հայերեն մեկնությունը եղել է ամբողջական, որը Գրիգոր Տաթևացու աղբյուրներից մեկն է եղել:
- Կարողացել ենք փաստել, որ հայ իրականության մեջ եղել են Յոթի գրքի՝ Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քոբայրեցու մեկնությունների ամբողջական տարբերակները, որոնցից օգտվել են Վանական Վարդապետն ու Գրիգոր Տաթևացին:
- Կատարվել են ծեռագրագիտական ճշգրտումներ, հայտնաբերվել է Գրիգոր Նարեկացու *Ո՞վ է դա*-ի մեկնության խմբագրված տարբերակը:
- Ձեռագրական փնտրտուքի արդյունքում փաստվել է, որ հայ իրականության մեջ եղել է Յոթի գրքի՝ Բարսեղ Մեծի մեկնություն կամ դրան վերաբերող որևէ այլ միավորի թարգմանություն (նամակ, ճառ):
- Առաջին անգամ անդրադարձ է կատարվել խնդրո առարկա լուծմունքում տեղ գտած բառակազմական նորաբանություններին, բառօգտագործումների այլ դրսևորումներին, հոմանիշային տարբերություններին, ոճական առանձնահատկություններին:

Ատենախոսությունն ունի նաև ճանաչողական և կիրառական նշանակություն: Աշխատանքի դրույթները կարող են օգտագործվել «Հայ աստվածաբանական մատենագրություն», «Միջնադարյան մեկնողական գրականություն» դասընթացների ուսումնական ծրագրերում:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած երեք հոդվածներում:

### **ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)**

Ատենախոսությունը շարադրելու ընթացքում մեր կողմից օգտագործված պատմաաղբյուրագիտական նյութը բաժանվում է հետևյալ խմբերի՝ ձեռագրեր (նաև հիշատակարաններ՝ անտիպ և հրատարակված), պատմագրական երկեր, ուսումնասիրություններ:

Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքն անտիպ է, պահվում է Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ, ձեռ. 1115, 1408 ք.), այն Տաթևացու ինքնագիրն է: Որոշ լեզվագիտական հարցեր շտկելու համար ինքնագիր ձեռագիրը համեմատել ենք ՄՄ 1114 (Ժե դ.) գրչագրի հետ:

Միջնադարյան որևէ հեղինակի կյանքի և գործունեության մասին տեղեկություն հաղորդող կարևոր աղբյուր են համդիսանում ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև երկերում «թաքնված» մանրամասները: Գրիգոր Տաթևացու կյանքի, հասարակական-քաղաքական, մանկավարժական գործունեության տվյալներն ամբողջացնելու, գրական ժառանգությանն անդրադառնալու նպատակով օգտվել ենք ՄՄ 3881 (ժողովածո, 1886-1888 քք., Գտչոյ վանք), 9622 (ժողովածո, 1858 ք., Երուսաղեմ), 6607 (Մատթեոս Ջուղայեցի, Քարոզգիրք, Մուտուռկու վանք, 1715 ք.), 921 (Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Տաթև, Խառաբաստ, Մեծոփ, 1409 ք.), 2065 (Գրիգոր Տաթևացի, 1410 ք., Մեծոփայ վանք), 7823 (Առաքել Կոստանեանց, պատմութիւն Արցախի, 1870-1880 քք.), 4268 (ժողովածո, Ժե դ.), 5118 (ժողովածո, 1412, Աւագ վանք), 3616 (Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, 1387 ք., Շահապօնք ամրոց, գրիչ՝ հեղինակը), 1020 (Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Սաղմոսաց, Ժե դ.), 5869 (Գրիգոր Տաթևացի, Մատենագրութիւնք, 1415-1416 քք.), 1019 (ժողովածո, ԺԸ դ.), 1198 (Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Սաղմոսաց, Մատթէի, 1413 ք., Տաթև, Հերմոն, Եղվարդ), 2976 (Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Եսայեայ, 1741ք., Տաթև), 5169 (ժողովածո, Ժե դ.), 3578 (ժողովածո, 1402 ք., Քարավաճառ գիւղ -Օար գաւառ), 3295 (ժողովածո, ԺԸ դ.), 1294 (Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, Յովհաննու, 1641-1642 քք., Ապրակունեաց վանք), 6405 (Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, 1409-1410 քք., Երևան) թվահամարների ձեռագրերից, ինչպես նաև Լ. Խաչիկյանի կազմած ԺԴ, ԺԵ դարերի հիշատակարաններից և Ղևոնդ Վարդապետ Հովհաննիսյանի գրքից: Օգտակար և կարևոր ուսումնասիրություն է եղել Ռ. Թոմսոնի աշխատասիրությունը:

Հոբի գրքի՝ Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունը մեզ է հասել ամբողջական տարբերակով: Այն առանձնահատուկ է Երանով, որ պարունակում է սկզբնաղբյուրներից մեջբերումներ, որոնց շնորհիվ ծանոթանում ենք նախորդ դարերում հայտնի (գուցե ամբողջական) մեկնությունների հետ, որոնք մեզ չեն հասել առանձին ամբողջական տարբերակներով: Այս նյութին վերաբերող ենթավերնագիրը շարադրելիս օգտվել ենք կրկին անտիպ օրինակից՝ ՄՄ 1166

(1303 թ.) գրչագրից, այն համեմատվել է Գրիգոր Տաթևացու և այլ հեղինակների մեկնությունների հետ:

Միջնադարյան մատենագրության մեջ կարևոր աղբյուրներ են նաև *պատճառ*-ները, որոնք լրացուցիչ տեղեկություններ են տալիս մեկնությունների մասին և մի տեսակ նախամուտք, ներածություն են հանդիսացել: Հոբի գրքի մեկնությունների *պատճառ*-ների քննության ժամանակ օգտագործել ենք ՄՍ 1879 (ԺԳ դ.), 1981 (ԺԵ դ.) թվահամարների գրչագրերի նյութը, որոնք դեռևս անտիպ են: Այս ենթագլխի շարադրման համար օգտագործել ենք նաև Ս. Է. Շիրինյանի, Յ. Ն. Ակինյանի, Յ. Վարդանյանի, Մ. Տեր-Մովսեսյանի, Պ. Մուրադյանի, Յ. Զյոսեյանի, Ե. վրդ. Պետրոսյանի և Յ. աբղ. Նաջարյանի գրքերն ու հոդվածները:

Հայ մատենագրության մեջ Գրիգոր Տաթևացուց հետո Հոբի գրքին անդրադարձել են նաև Պետրոս արք. Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցին և Պողոս Տյուրիկեցին: Նրանց մեկնությունները ևս անտիպ են, որոնց անդրադառնալիս օգտվել ենք համապատասխանաբար ՄՍ 1174 (Պետրոս արք. Բերդումյանի ինքնագիր, 1776 թ.) և ՄՍ 2730 (1778 թ.) գրչագրերից: Պետրոս արք. Բերդումյանի երկն ամբողջական է, ընդգրկում է Հոբի գրքի բոլոր գլուխները, իսկ Պողոս Տյուրիկեցին մեկնում է միայն առաջին երկու գլուխները:

Այս ուսումնասիրության մեջ կարևոր տեղ ունեն ՄՍ 1138 (Ժողովածոյ, 1347 թ.) և ՄՍ 1426 (Ժողովածոյ, ԺԴ դ.) ձեռագրերը, որոնցում պարունակվող որոշ միավորների համեմատությունն այլ ձեռագրային միավորների հետ օգնել են ճշգրտելու կարևոր հարցեր, մասնավորապես դրանք խիստ արժեքավոր են եղել Հոբի գրքի՝ Որոգիմեսի, Փիլոն Եբրայեցու, Բարսեղ Մեծի, Եփրեմ Ասորու, Իսիքիոս Երուսաղեմացու, Գրիգոր Նարեկացու մեկնությունների կամ այլ միավորների (նամակ, ճառ) հետ առնչվող երկերի հեղինակային պատկանելության և այլ խնդիրների բացահայտման գործում: Այս ձեռագրերի միջոցով լրացվել է նաև Գրիգոր Տաթևացու լուծմունքի մեջ օգտագործված աղբյուրների ցանկը:

Քանի որ Գրիգոր Տաթևացին օգտվել է նաև Ընդհանրական Եկեղեցու հայրերի մեկնություններից, ապա մեզ համար ուսումնասիրության կարևոր աղբյուր են եղել տպագրված խնդրո առարկա մեկնությունների հայրաբանական շարքերը, որոնց հետ ենք համեմատել Տաթևացու գրվածքը՝ որոշ խնդրահարույց հատվածների հեղինակային պատկանելության հարցերը ճշգրտելու համար:

Հոբի գրքի մեկնությունների շարքում իր նշանակալի տեղն ու դերն ունի Իսիքիոս Երուսաղեմացու մեկնությունը, որի մասին տեղեկանում ենք Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունից: Այն հայ իրականության մեջ հայտնի Հոբի գրքի ամենավաղ թարգմանական մեկնությունն է, որից, անշուշտ, օգտվել են հետագա դարերի հայ մեկնիչները: Հոբի գրքի՝ Իսիքիոս Երուսաղեմացու մեկնությունն ուսումնասիրվել և հրատարակվել է 1913 թ. Յ. Զ. Չրաքեանի կողմից, իսկ 1983 թ. Շ. Ռդնուն հրատարակել է մեկնության քննական բնագիրը: Սրանք կարևոր աղբյուրներ են եղել Իսիքիոսի մեկնության մասին խոսելիս: Կարևոր և մեզ համար օգտակար աշխատություն է հանդիսացել նաև Ի. Բարսեղ Սարգիսյանի ուսումնասիրությունը:

Աշխատանքում հիշատակված հեղինակների կենսագրությամբ, գործունեությամբ, պատմական ժամանակաշրջաններին անդրադառնալիս օգտվել ենք Ստեփանոս Ասողիկի, Առաքել Դավրիժեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Թովմա Մեծփեցու «Պատմություն»-ներից: Պատմական ժամանակաշրջանի նկարագրության համար կարևոր աղբյուր են հանդիսացել նաև Ղ. Ալիշանի, Գարեգին վրդ. Հովսեփյանի, Մ. Չամչյանցի,

Մ. արք. Օրմանյանի, Ե. Տեր-Մինասյանի, Զ. Հակոբյանի, Վ. Հակոբյանի, Մ. Ջուլալյանի, Ս. Սրապյանի, Կ. Կոստանյանցի, Ա. Մաթևոսյանի, Վ. Վարդանյանի, Կ. Մաթևոսյանի ուսումնասիրությունները:

Գրիգոր Տաթևացին թողել է մատենագրական հարուստ ժառանգություն, որը ներկայացնելիս և Հոբի գրքի լուծմունքի առկա բոլոր ձեռագրերի ցանկը կազմելիս օգտվել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Ջննառի ձեռագրացուցակներից, Ղ. վրդ. Փիրղալենյանի, Նորայր եպս. Պողարյանի երկերից, «Հայ գիրքը 1512-1800 թթ.» գրքից: Այս հարցն ամբողջացնելու նպատակով օգտագործել ենք նաև Տաթևացու տպագիր գործերը:

Գրիգոր Տաթևացին Աստվածաշնչի մեծ գիտակ էր: Աստվածաշնչյան գրքերի ուսումնասիրողներն իրենց աշխատանքներում օգտագործել են նաև Գրիգոր Տաթևացու աստվածաշնչյան գրքերի ցանկը: Այս մասին հակիրճ անդրադարձը շարադրել ենք ըստ Վ. Ներսեսյանի և Մ. Տեր-Մովսեսյանի գրքերի:

Մեր աշխատության մաս է կազմում Գրիգոր Տաթևացու լուծմունքի աստվածաբանական դրույթների վերլուծությունը՝ Հայ Եկեղեցու դավանանքի լուսի ներքո: Քանի որ Գրիգոր Տաթևացու գրվածքում արծարծված են Հայ Եկեղեցու դավանաբանության գրեթե բոլոր կարևորագույն խնդիրները, ուստի աշխատել ենք ի մի բերել և դասակարգել Տաթևացու աստվածաբանական հայացքները, որոնք սփռված են երկի էջերում: Եթե փորձեինք Տաթևացու աստվածաբանական ձևակերպումները համեմատել Եկեղեցու հայրերի համապատասխան թեմաների հետ, ապա մեր աշխատության ծավալը կկրկնապատկվեր, ուստի հարկ ենք համարել բավարարվել միայն Տաթևացու բանաձևումներով՝ դրանք երբեմն-երբեմն համեմատելով Հայ Եկեղեցու հայրերի երկերի և դավանաբանական խնդիրներ շոշափող այլ գրվածքների հետ: Այս բաժնի շարադրման համար օգտվել ենք նախ Գրիգոր Տաթևացու մյուս գործերից, ապա՝ Գրիգոր Լուսավորչի *Վարդապետություն*-ից, Դավիթ Անհաղթի, Հովհան Մանդակունու, Ջաքարիա Չագեցու, Գրիգոր Նարեկացու գրվածքներից, կարևոր աղբյուրներ են եղել ժամագրքերը, Շարակնոցը, ճաշոց գիրքը, Հայսմաուրբը, «Կնիք Հաւատոյ» դավանաբանական ժողովածուն: Տաթևացու աստվածաբանական հայացքներին անդրադառնալիս օգտագործել ենք նաև Գարեգին Ա Սարգսյանի, Ա. Տեր-Միքելյանի, Շահե արք. Աճեմյանի, Վաչե Ծ. վրդ. Իգմատիոսյանի, Թ. Տանապետյանի ուսումնասիրությունները, որոնց շնորհիվ առավել ամբողջական է դարձել նյութը:

Թեև Գրիգոր Տաթևացու այս գրվածքը քերականական աշխատություն չէ, սակայն այստեղ ևս կարող ենք խոսել նրա համակարգված լեզվագիտական իմացության, գեղագիտական հայացքների և խոսքի շարադրանքում գեղարվեստական հնարքների օգտագործման մասին, որոնք չէինք կարող շրջանցել: Լեզվաբանական-բանասիրական հարցերը շարադրելիս օգտվել ենք ՆԲՀԼ, ՄԶԲ, Հր. Աճառյանի բառարաններից, «Բառարան Սուրբ Գրոց»-ից, Ս. Գրիգորյանի գրքերից:

Գրիգոր Տաթևացու երկերում արծարծվել են ոչ միայն աստվածաբանական, այլ նաև գեղագիտական, սոցիալ-տնտեսագիտական, փիլիսոփայական, մանկավարժական հարցեր, որոնց անդրադարձել են Ս. Արևշատյանը, Հ. Գաբրիելյանը, Ս. Չաքարյանը, Ն. Թովմասյանը, Լ. Հովհաննիսյանը, Լ. Դուռնովոն, Հ. Հակոբյանը, Ա. Մովսիսյանը:

Հոբի գիրքը ներշնչման և ուսումնասիրության աղբյուր է եղել տարբեր դարերի հայ և օտար մեկնիչների համար: Սա այն գիրքն է, որի հեղինակի, գրության ժամանակի և տեղի մասին հնուց ի վեր եղել են իրարաներձ կարծիքներ: Այս

գիրքը դժվարություն է ներկայացրել նաև հասկանալու և մեկնելու առումով, քանի որ այն իր մեջ այլաբանական մեծ շերտեր է կրում: Գիրքն առանձնահատուկ է նաև նրանով, որ երբայական բանաստեղծության հնագույն մոմիչներից է: Մեր աշխատության մեջ անդրադարձել ենք այս բոլոր հարցերին, որոնք ներկայացնելու համար կարևոր ուսումնասիրություններ են եղել Ա. Լուպուխինի, Է. Յանգի, Գ. Դարբինյանի, Ա. Կայայանի, Ստ. Ազոնցի, Բ. Եղիայանի գործերը:

Երբ գործ ունենք մեկնիչ-հեղինակի հետ և նրա գրվածքը համեմատում ենք այլ մեկնությունների հետ, անհնար է չնկատել տարբեր մատենագիրների գրվածքների ոճական առանձնահատկությունները, մեկնողական այս կամ այն մեթոդին տրվող նախապատվությունը: Քանի որ մեր աշխատության մեջ Դոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքը համեմատել ենք տարբեր մեկնիչների նույնանուն գրվածքների հետ, չէինք կարող շրջանցել մեկնողական ոճի ու մեթոդների խնդիրները: Այս հարցերին անդրադարձել ենք տարբեր ենթավերնագրերում և օգտվել Մ. - Է. Ծիրինյանի, Փ. Ամբասյանի, Լ. Խաչիկյանի, Գր. Զակոբյանի, Կ. Մուրադյանի հոդվածներից ու գրքերից:

Գրիգոր Տաթևացու կենսագրական թվականների ճշգրտման համար օգտվել ենք Զ. Բաղայանի ուսումնասիրությունից:

Չայ Առաքելական եկեղեցու սրբոց (Յոթ Նահապետ, Եղիշե, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Տաթևացի) հիշատակության տոներին անդրադառնալիս օգտակար և կարևոր տեղեկություններ ենք քաղել Ռ. Վարդանյանի և Ա. Սահակյանի գրքերից:

Աշխատանքում հիշատակվող հեղինակների կենսագրությունների մասը լրացնելուն նպաստել է «Քրիստոնյա Չայաստան» հանրագիտարանը:

Այսպիսով՝ ամբա ձեռագրական նյութը, հրատարակված սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում ըստ պատշաճի ուսումնասիրել Դոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքը:

### **ԱՆԵՆԱԽՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Առեմախտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից (161 էջ), երեք հավելվածից (25 էջ): Հավելվածներում ներկայացված են մինչ օրս անտիպ գործեր՝ Դոբի գրքի՝ Որոգիների մեկնության *պատճառ*-ը, հատվածներ Գրիգոր Տաթևացու «Լուծմունք Յոբայ» անտիպ երկից և Դոբի գրքի՝ Վանական Վարդապետի քաղվածո անտիպ մեկնությունից:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ** հիմնավորվում են ընտրված թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունը, ներկայացվում է աշխատանքի գիտական նորույթը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «ԳՐԻԳՐ ՏԱԹԵՎԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՈՐԶԱՆԸ: ՏԱԹԵՎԱՑԻՆ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ»,** բաղկացած է չորս ենթագլխից: *Առաջին ենթագլխում՝ «Պատմական ակնարկ. Գրիգոր Տաթևացու ապրած ժամանակաշրջանը»,* ներկայացված է պատմական այն խառնակ ժամանակաշրջաններից մեկը, երբ Չայաստան էին ներխուժում Ոսկե Դորդայի խաները և մեծ ավերածություններ գործում երկրում: Հազիվ է թողթամիշը Չայաստանից հեռանում (այս մասին խոսում է նաև Թովմա Մեծփեցի պատմիչը), երբ սկսվում են Լեմկ-Թեմուրի ավերիչ արշավանքները: Արշավանքներից մեկի ժամանակ Գրիգոր Տաթևացին ևս ականատես է դառնում այն ավերներին ու վայրագություններին, որոնք իրագործվում էին, և սրանց մասին նա պատմում է իր «Հարցմունք Գեորգեայ և պատասխանիք» երկի հիշատակարանում, որն ավարտին է հասցրել Պոռոյանների իշխանանիստ



Շահապոնք բերդի պաշարման ժամանակ: Ուշագրավ է այն փաստը, որ Տաթևացու գործունեության առաջնությունը է եղել նաև Աղթամարի (1113 թ.-ից) հակաթուռ կաթողիկոսությունն անեծքից ազատագրելը, որի մասին մանրամասն շարադրված է նրա «Վասն աթոռոյ Աղթամարայ» գրվածքում: Մեծ է նրա ազգանվեր գործը կաթողիկոսական աթոռի տեղափոխման գործընթացում, որն իրենից հետո իրագործեցին նրա աշակերտները: Բացի այս գլխավոր խնդիրներից՝ պետք էր նաև գաղափարական պայքար մղել կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունների և միարարական շարժման դեմ, որոնց պատճառով հայերն արդեն բաժանվել էին երկու խմբի:

***Երկրորդ ենթագլխում՝ «Գրիգոր Տաթևացու կյանքն ու գործունեությունը»,*** ներկայացված են Տաթևացու կենսագրական բոլոր մանրամասները, որոնք դուրս են բերվել անտիպ և տպագիր գրականության էջերից, ամբողջացվել է նրա գործունեությունը: Գրիգոր Տաթևացու կենսագրության մասին հիմնական տեղեկություններ հաղորդում են նրա աշակերտներ Թովմա Մեծոփեցին, Մատթեոս Ջուղայեցին, և փոքրիկ հատակտորներ ենք գտնում նաև ձեռագրերում պահպանված հիշատակարաններում, երբեմն էլ նրա աշխատությունների հիշատակարաններում: Տաթևացին ծնվել է 1346 թվականին: Ուշիմ մանուկին ուսման է վերցնում Յովհան Որոտմեցին: Գրիգոր Տաթևացին 28 տարի աշակերտում է Որոտմեցուն, որից հետո քահանա է ձեռնադրվում: Յովհան Որոտմեցին մահվանից առաջ նրան տալիս է վարդապետական աստիճան և կարգում բոլորի առաջնորդ: Ստանձնելով Տաթևի համալսարանի ղեկավարությունը՝ ջանք ու եռանդ չի խնայում ուսուցանելու աշակերտներին: Կյանքի վերջին տարիներին կազմավորում է նաև Մեծփա վանքի բարձր տիպի դպրոցը, որտեղ առաջին հերթին ուսուցանում էր գրչության արվեստ: Հասկանալով լենկթեմուրյան ավերիչ արշավանքներից կրած ձեռագրական առեղի կորստի զիցը՝ նպատակ ուներ վերականգնել դրանք: Մեծփա վանքից Տաթև վերադառնալուց ութ օր հետո՝ 1408 թ. դեկտեմբերի 27-ին, կնքում է իր մահկանացուն (նրա մահվան տարեթիվը ճշգրտվել է մեր կողմից):

***Երրորդ ենթագլխում՝ «Գրիգոր Տաթևացու մանկավարժական-վարդապետական գործունեությունը»*** ներկայացված են Գրիգոր Տաթևացու գիտամանկավարժական գործունեության հիմնական կողմերը: Իր մեծագույն ներդրումն, անշուշտ, կապվում է առաջին հերթին Տաթևի վանքի հետ: Շուրջ քսան տարի «ի դառնախառար ժամանակիս իբրև զարեգակ ի միջօրէի պայծառացեալ լուսաւորէ գեկեղեցի...»: Տաթևացին համալսարանի համբավն այնքան մեծացրեց, որ երկրի տարբեր վայրերից՝ Երզնկայից, Շամախից, Կապանից, Ուշտունիքից, Բաղեշից, Աստապատից, Ջուղայից, Գանձասարից, Թավրիզից, Փայտակարանից, Ղրիմից, Աղվանքից, հեռավոր Կիլիկիայից, Տփղիսից, բազում աշակերտներ են գալիս ուսանելու, որոնց թիվը տարբեր ժամանակներում եղել է 60-ից մինչև 200 աշակերտ: Ուսյալ վարդապետի ռաբունապետության օրոք Տաթևի վանքի դպրոցում գործում էին երեք բաժիններ կամ ուսումնարաններ: Յնուտ մանկավարժը և գիտնական ուսուցիչն ունեցել է բազմաթիվ մեթոդներ, որոնց միջոցով նյութն առավել հասանելի և հասկանալի է դարձրել: Նրա երկերը, որոնք գրվում էին հատկապես ուսուցման նպատակով, բաժանված էին գլուխների, ենթաբաժանումների՝ մտքին առավել հասկանալի լինելու և քարոզխոսության մեջ գործածվելու համար: Նա հատկապես դիմել է հարց ու պատասխանի ձևով դասն անցկացնելու հնարին: Աստվածաշնչի գրքերից և նրանց մեկնություններից բազում հատվածներ է անգիր հանձնարարել իր աշակերտներին: Տաթևացին ոչ միայն հետևում էր Տաթևի դպրոցի ուսումնական գործընթացին, այլև իր ուշադրության կենտրոնում էր պահում նաև

Ապրակունյաց, Սաղմոսավանհի և հատկապես Մեծոփավանքի դպրոցները: Գրիգոր Տաթևացուն է վերագրվում մեր եկեղեցու վարդապետական մասնավոր իշխանության և ծայրագույն վարդապետական աստիճան տալու ծիսակարգը: Հաշվի առնելով Գրիգոր Տաթևացու սրբակենցաղ վարքն ու մեծ գործը՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին սրբադասել է և նրա հիշատակը տոնում է Մեծ Պահքի չորրորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ Հովհան Օձնեցու, Հովհան Որոտնեցու, Երուսաղեմի Հովհաննես հայրապետի հետ:

**Չորրորդ ենթագլխում՝ «Մատենագրական ժառանգությունը»**, ի մի են բերված Գրիգոր Տաթևացու այն բոլոր աշխատությունները (մոտ 30 երկ), որոնք պահպանվել և հասել են մեզ: Այստեղ ներկայացված է նաև Հոբի գրքի լուծմունքի ձեռագրերի ցանկը, որը կազմվել է ձեռագրացուցակների հիման վրա: Պահպանվել է նաև Հոբի լուծմունքի ինքնագիրը:

**Երկրորդ գլուխը՝ «ՀՈՒԻ ԳԻՐՔԸ: ՀՈՒԻ ԳՐՔԻ՝ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԼՈՒԾՄՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ՈՃԸ»**, բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Հոբի գիրքը. առանձնահատկություններն ու Ընդհանրական Եկեղեցու հայրերի գրվածքներում պահպանված մեկնությունները»**, անդրադարձել ենք Հոբի գրքի գրման ժամանակի, հեղինակի, Հոբի ով լինելու խնդիրներին: Հայ մատենագիրներից Ստեփանոս Սյունեցին Հոբի գրքի հավանական հեղինակ է համարում Սողոմոնին, իսկ Վանական Վարդապետն ու Գրիգոր Տաթևացին ասում են, որ Մովսեսն այն գրել է որպես պատմություն, Սողոմոնը տաղաչափել է որպես բանաստեղծություն, իսկ Եզրասը Սուրբ Հոգով լրացրել և ամբողջացրել է հրեական գերությունից հետո:

Նախաետգրասյան գրվածք լինելու պատճառով Հոբի գիրքն ընդգրկվել է Աստվածաշնչի կանոնի Գ խմբավորման մեջ:

Հոբի գրքին են անդրադարձել Ընդհանրական Եկեղեցու բազմաթիվ նշանավոր հայրեր, որոնցից շատերի մեկնություններից մեզ հաստակոտորներ են հասել: Հայ թարգմանական մեկնությունների շնորհիվ պահպանվել և միայն հայերենով է հայտնի Հոբի գրքի՝ Իսիթիոս Երուսաղեմացու մեկնությունը: Բացի նշված հայրերից՝ Հոբի գրքի մեկնություններ ունեն Հովհան Ոսկեբերանը, Դիդիմոս Կույրը, Եփրեմ Ասորին, Ողիմպիոսորոսը, Որոգինեսը և Արևմտյան Եկեղեցու հայրեր Օգոստինոս Երանելին, Գրիգոր Մեծը, Կղեմես Ալեքսանդրացին, Իշողատ Մերվացին, Հուլիանոս Էկլանացին, Հուլիանոս Արիանացին: Հորը քրիստոնեական եկեղեցու ավանդության մեջ հանդես է գալիս որպես Հիսուս Քրիստոսի նախատիպ (ստվեր):

**Երկրորդ ենթագլխում՝ «Գրիգոր Տաթևացու լուծմունքի մեկնողական ոճը»**, ներկայացված է ակնարկ մեկնողական դպրոցների պատմությունից: Այնուհետև անդրադարձել ենք Գրիգոր Տաթևացու լուծմունքում օգտագործված մեթոդներին, մեկնողական ոճին:

Քրիստոնեական իրականության մեջ գոյություն ունեն մեկնության երկու հիմնական եղանակներ՝ տառացի կամ բառացի (նաև՝ պատմական) և այլաբանական, որոնք իրենց հերթին տրոհվել են ենթաճյուղերի՝ պահպանելով իրենց սկզբունքները: Այս եղանակները համապատասխանաբար պատկանում են Անտիոքյան և Ալեքսանդրյան մեկնողական դպրոցներին:

Աճշուշտ, այս երկու մեկնաբանական մեծ դպրոցներն իրենց ազդեցությունն են թողել հայ թարգմանական և ինքնուրույն մեկնողական գրականության վրա՝ սկսած V դարից: Հայ մեկնիչները հավասարապես գործածել են մեկնաբանական երկու եղանակները՝ ելնելով իրենց կողմից մեկնաբանվող տեքստերի ասելիքից, սակայն պատմական մեկնաբանական երկերը քննելիս, թերևս, առավելությունն

ավելի հաճախ տրվել է տառացի-բառացի մեկնողական եղանակին: Հետաքրքիր է նաև այն իրողությունը, որ հայ մեկնիչները, իրենց երկերում ստեղծելով *շրթա* մեկնություններ, օգտվել են և՛ Ալեքսանդրյան, և՛ Անտիոքյան դպրոցների ներկայացուցիչների երկերից, հեղինակային տեքստերը քաղվածաբար իրար կապելով՝ ստեղծել են ուրույն մեկնողական ոճ, եղանակ:

Խնդրո առարկա Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքը ևս գերծ չէ երկու դպրոցների մեկնաբանման եղանակների օգտագործումից: Օգտվելով նախորդ մեկնիչների գրվածքներից՝ ստեղծել է մեկնողական ինքնուրույն ոճ: Հոբի գիրքն ունի խրթին մտքեր, որոնց Տաթևացին տալիս է թե՛ այլաբանական և թե՛ տառացի-բառացի լուծումներ: Գրիգոր Տաթևացու գրվածքի ժանրը լուծմունք է, այն իրենից ներկայացնում է բառերի բացատրական «շարք», կամ դժվարընկալելի բառերի, հասկացությունների մեկնաբանություն՝ կապելով տեքստի հետ, մեջբերելով նախորդ մեկնություններից համապատասխան հատվածներ: Այն նպաստում է բնագրի անհասկանալի մասերը հասկանալի և մեկնված դարձնելուն: Հեղինակն ինքն է ընտրում բացատրության կարիք ունեցող հատվածներն ու արտահայտությունները: Լուծմունքը՝ որպես մեկնության ձև, սկիզբ է առել Ալեքսանդրյան մեկնողական դպրոցից և տարածում գտել այդ դպրոցի ներկայացուցիչների շնորհիվ: Ալեքսանդրյան դպրոցի մեկնիչների կողմից հիմք դրված այլաբանական մեկնաբանությունը հետագայում դարձնավ Աստվածաշնչի մեկնության գլխավոր մեթոդը: Հայ մատենագրության մեջ այս ժանրով են ներկայացվել ոչ միայն թարգմանական, այլև ինքնուրույն երկերը, որոնցից է Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքը: Լուծմունքը, չնայած մեծ ծավալին և ամբողջական լինելուն, աչքի է ընկնում իր լակոնիկ ոճով, հեղինակն աշխատում է հնարավորինս սեղմ, բայց իմաստալից խոսքով մեկնել: Մեկնաբանում է ոչ միայն Հոբի գրքի համարները, այլ նաև նախորդ մեկնություններում հանդիպող բառերն ու արտահայտությունները, որոնք հաճախ բնագրի հետ կապ չունեն: Երբեմն բառացի մեկնության անմիջապես հաջորդում է այլաբանությունը: Հաճախ մեկնաբանության մեջ Աստվածաշնչի այլ գրքերից բերված հատվածները մեկնում է երկարաշունչ ճառով՝ ընդգծելու համար Հայ Եկեղեցու դավանաբանության ճշմարիտ տեսակետը: Տաթևացին, առանց ուղղակի մեջբերելու Աստվածաշնչի համարը, բազմիցս հարցի ձևով է ձևակերպում լուծվող կամ մեկնվող հատվածը, որին հաջորդում է պատասխանը: Որոշ հատվածների համար Տաթևացին ունի վերնագրեր, որոնց հետևում է մեկնությունը, սակայն հարցումը կարող է դրվել նաև վերնագրից հետո՝ հաջորդող պատասխանով: Տաթևացին բոլոր հատվածները միանման չի մեկնել, որոշ արտահայտություններ մեկնվել են էջերով, մյուս մասի մեկնությունների համար էլ բավարարվել է մեկ բառով: Գրեթե միշտ մեկնվող հատվածի համար տալիս է մեկից ավելի դասակարգված բացատրություններ, որոնք կարող են հասնել քսանի, որը Տաթևացու երկերի հիմնական յուրահատկությունն է: Երբեմն հարկ է համարում մեկնել որպես մեկնություն հանդես եկող հատվածը կամ բառը: Եթե մեկնվող հատվածը կամ բառը հաստատվում է Սուրբ Գրքով, ապա այն Տաթևացու համար բացարձակ ճշմարտություն է, որի հիմքի վրա էլ կառուցում է իր խոսքը: Մեկնվող հատվածներն ունեն ոչ միայն աստվածաբանական միտք ու բացատրություն, այլև շատ հաճախ դրանք ուղեկցվում են փիլիսոփայական եզրերի զուգահեռ օգտագործմամբ, բառաբացատրությամբ, աշխարհագրական, բնագիտական, աստղագիտական և այլ կարևոր տեղեկությունների հաղորդմամբ: Լուծմունքը համեմված է նաև բարոյախրատական, քրիստոնեական ճիշտ կենցաղավարության հորդորներով: Տաթևացու վերոքննարկվող գրվածքում խտացված է յուրաքանչյուր աստվածաբանական, դավանաբանական միտք, որի

բազմակողմանի բացատրությունները հարկ է լինում փնտրել «Գիրք Հարցմանց»-ում, «Քարոզգրքեր»-ում կամ իր այլ մեկնություններում: Լուծմունքը կազմելիս նա օգտվել է իրենից առաջ գոյություն ունեցած թե՛ փիլիսոփայական, թե՛ աստվածաբանական թարգմանական և ինքնուրույն մեկնողական հարուստ ժառանգությունից, ինչի հաստատումներն են նրա բազում օրինակները թե՛ փիլիսոփաներից, թե՛ Ընդհանրական և Հայ եկեղեցու հայրերից:

**Երրորդ ենթազխում՝ «Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքի աղբյուրները»**, ներկայացված է այն բոլոր աղբյուրների քննությունը, որոնք, մեր կարծիքով, ձեռքի տակ ունեցել է Գրիգոր Տաթևացին իր երկը շարադրելիս: Հոբի գրքի՝ Իսիքիոս Երուսաղեմացու մեկնությունը հայ իրականության մեջ հայտնի ամենավաղ թարգմանական մեկնություններից է (V դար): Այն մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ՝ պահպանված Վանական Վարդապետի նույնանուն մեկնության մեջ, որով և ծանոթանում ենք Իսիքիոսի երկին: Հոբի գրքի՝ Իսիքիոս Երուսաղեմացու մեկնությունն ինքնատիպ է իր ոճով, մտքի շարադրմամբ, աստվածաբանական լուծումներով: Թե՛ Իսիքիոս Երուսաղեմացին, թե՛ Գրիգոր Տաթևացին, ելնելով Հոբի գրքի ընծեռած հնարավորություններից, հաճախ են շոշափում աստվածաբանական-դավանաբանական հարցեր: Երկուսն էլ անդրադառնում են Սուրբ Երրորդության խորհրդին, Քրիստոսի աստվածության ու մարդեղության խորհրդին, Սուրբ Կույսից մարմնանալուն, աստվածային նախախնամությանը, Աստծո ստորոգելիներից Իսիքիոսն անդրադառնում է իմաստությանը, հավիտենականությանը:

Հոբ ԼԸ-ԼԹ գլուխների մեկնություններ մեզ են հասել հայ մատենագիրներ Համամ Արևելցուց և Գրիգոր Նարեկացուց, իսկ նույն գլուխների մեկնությունները Եղիշեն վերնագրում է «Վասն բանիցն Յոբայ, զոր խաւսեցաւ Աստուած ընդ Յոբայ և առողջացոյց զնա» և «Նորին՝ այլաբանութեամբ եկեղեցւոյն»: Հայ մեկնողական մատենագրության մեջ դրանք հայտնի են *Ո՛վ է դա* խորագրով, քանի որ *Ո՛վ է դա որ քարուցանէ յինէն գխորհուրդս* բառերով սկսվում է Աստծո խոսքը Հոբի հետ (Յոբ ԼԸ 2), որով գործող անձերի բոլոր հարցերին, կասկածներին, թյուրըմբռումներին Աստված է տալիս պատասխան: Գրիգոր Տաթևացու հիշյալ գլուխների լուծմունքում հաճախ գտնում ենք Եղիշեի, Համամ Արևելցու և Գրիգոր Նարեկացու մեկնություններից նույնանման հատվածներ. դրանք և՛ բառեր են, և՛ ամբողջական հատվածներ, և՛ իմաստային նմանություններ: Միաժամանակ, ելնելով մեր դիտարկումներից, պետք է նշենք, որ Հոբի գրքի Տաթևացու լուծմունքն իր մեկնողական ոճով, մեկնաբանական եղանակով, նյութի ընդգրկունությամբ, թեմաների բազմազանությամբ շատ է տարբերվում Եղիշեի, Համամ Արևելցու և Գրիգոր Նարեկացու մեկնություններից: Եղիշեի երկու միավորների գլխավոր առանցքն է եկեղեցին: Նա Հոբի գրքի այլաբանությունները վերագրում է եկեղեցուն, նրա դավանաբանությանը, իր հորինած երկխոսության մեջ կարողանում է ընթերցողին փոխանցել Աստծո արարչական մեծությունը, նրա անհուն սերը մարդու հանդեպ: Արևելցու խոսքը շատ ավելի հակիրճ է՝ աստվածաբանորեն դիպուկ ու կոնկրետ բնութագրող բառերով ու արտահայտություններով, զերծ է զեղարվեստականությունից, խթնաբանությունից: Գրիգոր Նարեկացին գրում է ճիշտ ու շքեղ, գունեղ, միաժամանակ, դավանաբանական հիմնարար խնդիրներ մեջբերելով (հատկապես շեշտը դնելով Քրիստոսի փրկագործության խորհրդի վրա), կարողանում է նոր մեկնվող հատվածը կապել նախորդ հատվածի հետ, օգտագործում է իրեն հատուկ հարուստ բառապաշար: Պետք է նշել, որ Գրիգոր Տաթևացին բավականին խնամքով է շարադրել այս խրթին հատվածները և

մեկնաբանել յուրովի: Ունենալով բազմակողմանի գիտելիքներ թե՛ փիլիսոփայությունից, թե՛ մեկնողական գրականությունից, կարելի է ասել, որ իր առջև դրված խնդիրը՝ «գոծուարալոյծ բանս Յոբայ», հասկանալի և մատչելի է դարձրել Վանական Վարդապետից երկու-երեք դար հետո ապող իր ժամանակաշրջանի անհատի համար: Իր միտքը հմտորեն է վերաշարադրել, բերելով օրինակներ Աստվածաշնչից, կենցաղից, որոշ բառերի համար օգտագործել է նոր հոմանիշներ՝ առավել ընդգծելու համար անհասկանալի բառերի իմաստը: Այս փնտրտուքների արդյունքում գտնվեցին մինչ այժմ միակ ձեռագրով (Վենետիկ, թիվ 1030 (հին՝ 339)) հայտնի Գրիգոր Նարեկացու *Ո՞վ է դա*-ի մեկնության համառոտ տարբերակները (ՄՍ 1138, ՄՍ 1426 ձեռագրերի միավորները նույնությամբ կրկնում են մեկը մյուսին): Սատենադարանի այս ձեռագրերում տեղ գտած միավորների շնորհիվ վենետիկյան գրչագրի շատ անընթեռնելի հատվածներ վերականգնվում են:

Յոբի գրքի՝ Յովհաննես Վանական Վարդապետ Տավուշեցու քաղվածո մեկնությունը մինչ Գրիգոր Տաթևացին եղած առայժմ հայտնի միակ ամբողջական մեկնությունն է: Վանական Վարդապետն իր մեկնությունը շարադրելիս բացի Իսիքիոս Երուսաղեմացուց օգտվել է նաև այլ հեղինակներից՝ Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյունեցի, Դավիթ Քոբայրեցի, որոնցից մեջբերվող հատվածների կողքին՝ լուսանցքներում, կրճատ նշում է նրանց անունները: Այս նշումները ՄՍ 1166 գրչագրում հասնում են մինչև 76ա թեթը: Եթե ձեռագրի մնացյալ էջերում նշված հեղինակների մեկնություններից նշումներ չկան, չի նշանակում, որ Վանականը շարունակության մեջ չի օգտվել այդ մեկնություններից: Հնարավոր է, որ գրչագրի կողմից չեն նշվել լուսանցային հեղինակային անվանումները: Համադրելով Վանական Վարդապետի և Գրիգոր Տաթևացու գրվածքները, հատկապես այն հատվածները, որտեղ Վանականի մոտ այլևս լուսանցային նշումներ չկան, Տաթևացու մոտ գտնում ենք հեղինակային մեջբերումներ, որոնք Վանականի մոտ միահյուսված են իր մեկնողական խոսքին: Սույն տեսակետը փաստելու է գալիս նաև ՄՍ 1138 ձեռագրում տեղ գտած *Ի բանեն Յոբայ Բարսղի ասաց[եալ]* գրվածքը: Այն քաղվածո գրառում է, որտեղ ի մի են բերված Յոբի գրքի՝ Բարսեղ Մեծի, Փիլոն Եբրայեցու, Որոզինեսի և Եփրեմ Ասորու մեկնություններից (կամ այլ միավորներից) հատվածներ (հեղինակային նշումները կատարված են լուսանցքում):

Մեկնությունների ուսումնասիրման կարևորագույն օղակ են հանդիսանում նաև Յոբի գրքի *պատճառ*-ները, որոնք հայ իրականության մեջ ստեղծվել են XI-XII դարերում: Դրանց նպատակն էր հասկանալի դարձնել Աստվածաշնչի գրքերի մեկնությունների խթնաբանությունները, դժվարընկալելի հատվածները: Դրանք հավաքվել և ի մի են բերվել Գրիգոր Աբասյանի շնորհիվ «Գիրք պատճառաց» պայմանական խորագիր կրող ժողովածուում (XII-XIII դդ.): Մեզ հայտնի են Յոբի գրքի՝ Որոզինեսի, Եփրեմ Ասորու, Իսիքիոս Երուսաղեմացու, Ստեփանոս Սյունեցու մեկնությունների *պատճառ*-ները: *Պատճառ*-ների քննությունը ցույց է տալիս, որ Գրիգոր Տաթևացին «Լուծմունք Յոբայ» գրվածքում օգտվել է Յոբի գրքի՝ Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու մեկնություններից և *պատճառ*-ներից: Տարբեր գրչագրերում տեղ գտած *պատճառ*-ների տարբերություններն ուսումնասիրելիս հայտնաբերեցինք Յոբի գրքի՝ Որոզինեսի մեկնության *պատճառ*-ը, որն օգտագործված ենք տեսնում Տաթևացու լուծմունքում: *Պատճառ*-ները լույս են սփռում աստվածաբանական-դավանաբանական տարբեր խնդիրների վրա, արծարծում, բացահայտում կարևորագույն տեղեկություններ, պատկերացում տալիս կորած երկերի բովանդակության մասին:

Գրիգոր Տաթևացին ծանոթ է թե՛ Եղիշեի, թե՛ Համան Արևելցու, թե՛ Գրիգոր Նարեկացու մեկնություններին և օգտվել է դրանցից՝ թողնելով իր անհատական ընկալման կնիքը: Տաթևացու լուծմունքն էլ գերծ չէ իրեն նախորդող մեկնիչների երկերի բառային, իմաստային կրկնություններից, ինչը ոչ թե նսեմացնում, այլ, ընդհակառակը, առավել ընդգծում է նրա կարողություններն ու հմտությունները, երկի գիտականությունը: Գրիգոր Տաթևացին օգտվել է Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունից և բացի նրա երկից՝ իր ձեռքի տակ ունեցել է Հոբի գրքի՝ Որոգինեսի, Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Ջոբայրեցու մեկնությունները (ամբողջական կամ հատվածաբար), Փիլոն Եբրայեցու, Բարսեղ Մեծի գրվածքներում Հոբի գրքի միևնույն հատվածների անդրադարձներ:

**Երրորդ գլուխը՝ «ՀՈԲԻ ԳՐՔԻ՝ ԳՐԻԳՐԻ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԼՈՒԾՄՈՒՆՔԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ»,** բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքի աստվածաբանական վերլուծությունը»,** մեկտեղված են երկի էջերում սփռված այն բոլոր աստվածաբանական-դավանաբանական մտքերն ու ձևակերպումները, որոնց Գրիգոր Տաթևացին հարկ է համարել անդրադառնալ իր լուծմունքում: Հոբի գրքի լուծմունքը Գրիգոր Տաթևացու կոթողային գործերից է, իր մեջ բյուրեղացնում և խտացնում է նախորդ ժամանակների պատմական, փիլիսոփայական, աստվածաբանական միտքը: Սույն երկի ուսումնասիրությունը նոր էջ է բացում ոչ միայն Տաթևացու գրական ողջ ժառանգության ընկալման ծիրում, այլև մեզ հասած Հոբի գրքի մեկնությունների շարքում: Այն հստակ բացահայտում է Հայ եկեղեցու դավանաբանության հիմնական դրույթները, և այս առումով պահպանում է իր այժմեականությունը: Այս անտիպ մեկնությունը ևս մեկ անգամ շեշտում է Տաթևացու՝ նյութի բազմակողմանի վերլուծության, խնդիրների հստակ ձևակերպման և դրանց մեկնողական տարբեր մեթոդներով մատուցելու կարողությունը: Երկում շոշափվում են երրորդաբանական, քրիստոսաբանական, փրկագործական, եկեղեցաբանական, վախճանաբանական, մարեմաբանական հարցեր և այլն: Դավանաբանական այս բոլոր հայացքները համակարգել ենք ընդունված կարգի համաձայն:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքում առկա լեզվաբանական և ոճական որոշ հարցերի շուրջ»,** տրված են այն բառակազմական նոր միավորները, որոնք առկա են «Լուծմունք Յոբայ» երկում: Գրվածքում կան որոշակի բառեր, որոնք կարծեք թե տվյալ ժամանակի կնիքն են կրում: Տաթևացին օգտագործում է նաև, ամենայն հավանականությամբ, ինքնաստեղծ բառեր, որոնք չեն հանդիպում բառարաններում. *աւղընթաց, աւղապատիր:* Կան բառեր էլ, որոնք Տաթևացին տալիս է նոր հոմանիշներ:

Լուծմունքը գերծ չէ օտարաբանություններից, որոնք գործածական են եղել միջին հայերենի բառաշերտում: Տաթևացին գործածել է նաև հունարեն ծագում ունեցող բառեր, որոնք գործածական են եղել հունաբան թարգմանություններում, հատկապես զգալի է Կապադովկյան հայրերի ազդեցությունը: Գրվածքում գործածական են նաև բարբառային բառեր: Խոսելով Հոբի յոթ որդիների և երեք դուստրերի քանակի մասին, Տաթևացին մեջբերում է անուն ժողովրդական ասացվածքից. «Գի այսբան թիւ սիրելի և գովելի է աշխարհական սովորութանց, ասեն՝ Աստուած տայ քեզ *եօքն որդի և երեք դասերք*»: Չնայած Տաթևացու գրվածքը խիստ աստվածաբանական-գիտական բնույթ ունի, այնուամենայնիվ, հանդիպում ենք նաև զեղարվեստական պատկերավոր խոսքի:

**երրորդ ենթազխում՝ «Յոթի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքի ազդեցությունը հետագա դարերի մեկնիչների նույնանուն երկերի վրա»,** ներկայացված են XVIII դարի հայ մեկնիչներ Պետրոս արք. Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցու և Պողոս Տյուրիկեցու երկերը: Անդրադարձել ենք Յոթի գրքի անտիպ այս մեկնություններին, որոնք նշյալ հեղինակների գրական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում: Պետրոս Բերդումյանի մեկնությունն ամբողջական է, ընդգրկում է Յոթի գրքի գրեթե բոլոր համարները, բացառությամբ կրկնվող համարների: Այն յուրօրինակ է իր պարզությամբ, հստակ մեկնաբանությամբ, նյութի ընդգրկունությամբ: Բերդումյանի մեջբերումներն անուղղակի կերպով կրկնուն են նույն միտքը, ավելի պարզ ու մատչելի դարձնում բացատրությունները՝ իր ժամանակաշրջանի ունկնդրին հասու լինելու համար: Պետրոս Բերդումյանի երկուն հանդիպում ենք վարքագրական տեղեկանքների, որոնք Յոթի գրքի մեկնություններում կարող ենք որակել որպես ժամրային նորամուտություններ: Ուշագրավ է նաև Յոթ Երանելու և Գրիգոր Լուսավորչի համեմատությունը: Բերդումյանի կիրառած նորույթներից է նաև այն, որ աստվածաշնչյան համարը մեկնելիս օրինակ է բերում հայոց պատմության այս կամ այն դրվագը: Ի տարբերություն նախորդ հայ մեկնիչների՝ Բերդումյանն իր երկուն օրինակներ և մեջբերումներ ունի լատին աստվածաբանների երկերից: Փորձել ենք օրինակների միջոցով հիմնավորել այն ազդեցությունները, որոնք ընդգծված են եղել այս մեկնության մեջ:

Ի տարբերություն Պետրոս արք. Բերդումյանի երկի՝ Պողոս Տյուրիկեցու գրվածքը պարունակում է Յոթի գրքի առաջին երկու գլուխների մեկնությունը, որը եղել է գրչի գլխավոր խնդիրը: Սկզբում նա մեջբերում է աստվածաշնչյան համարը, այնուհետ՝ տալիս մեկնությունը: Միակ նմանությունը Գրիգոր Տաթևացու լուծմունքի հետ այն է, որ Պողոս Տյուրիկեցին իր երկի վրջում անդրադառնում է նույն խնդիրներին, որոնց Տաթևացին անդրադարձել էր «Նորին քարոզ վասն փրկութեանց մեղաց ի բանն Յոբայ, որ ասէ. Վեցից վշտաց փրկեսցէ զքեզ և յոթներորդունն ոչ մերձեսցի առ քեզ չար» վերնագրված երկարաշունչ քարոզում (մեղք, փրկագործություն, չարչարանք և այլն):

**ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** տրված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. Հսկայածավալ է Գրիգոր Տաթևացու գրական ժառանգությունը, որի մեջ իր արժանի տեղն ունի «Լուծմունք Յոբայ» երկը: Այն անտիպ է, մեզ է հասել *եռամեծար վարդապետի* լուծմունքի ինքնագիր օրինակը: Ընդգրկում է Յոթի գիրքն ամբողջությամբ, վանական Վարդապետի քաղվածո մեկնությունից հետո միակ ամբողջական գրվածքն է:

2. Յոթի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքը խոսում է հեղինակի հանրագիտարանային գիտելիքների, աստվածաբանական կուռ մտածելակերպի, Հայ եկեղեցու դավանանքի իմացության և ջատագովման, հայ և ընդհանրական եկեղեցիների հայրերի գրվածքների քաջատեղյակության, համակողմանի վերլուծող և մեկնաբանող մտքի, կառուցողական և ստեղծագործական լեզվամտածողության մասին:

3. Լուծմունքում Տաթևացին օգտագործում է ոչ միայն մեկնության տառացի-բառացի (անտիոքյան) եղանակը, այլ նաև՝ այլաբանականը (ալեքսանդրյան): Այս երկուսի միախլուսումը ստեղծում է ամբողջական, բազմակողմանի, ընդգրկուն երկ, որը տալիս է Յոթի գիրքն ընկալելու որոշակի հարցերի պատասխաններ: Լուծմունքը համեմված է նաև բարոյախրատական, քրիստոնեական ճիշտ կենցաղավարության հորդորներով, ճառերով:

4. Մեծ մանկավարժն իր գրվածքը դյուրությամբ սերտելու համար բաժանել է մասերի, սկզբում ցանկի նման գրել է համառոտ ենթավերնագրերը, որից հետո ներկայացրել նյութը: Լուծմունքը, չնայած մեծ ծավալին և ամբողջական լինելուն, աչքի է ընկնում իր լակոնիկ ոճով, հեղինակն աշխատում է հնարավորինս սեղմ, բայց իմաստալից խոսքով մեկնել: Լուծմունքի ոճական առանձնահատկություններից մեկն էլ Հոբի գրքի ոչ բոլոր համարների ընդգրկելն է, այլ միայն խրթին հատվածների, բառերի մեկնաբանությունները: Հեղինակը մեկնաբանում է ոչ միայն Հոբի գրքի համարները, այլև նախորդ մեկնություններում հանդիպող բառերն ու արտահայտությունները, որոնք հաճախ բնագրի հետ կապ չունեն: Եթե մեկնվող հատվածը կամ բառը հաստատվում է Սուրբ Գրքով, ապա այն Տաթևացու համար բացարձակ ճշմարտություն է, որի հիմքի վրա էլ կառուցում է իր խոսքը:

5. Հոբը ոչ միայն հայ, այլև համաշխարհային քրիստոնեական եկեղեցու աստվածաշնչյան սիրելի սրբերից է, որի համբերությունը, ճշմարիտ աստվածաբաշտությունը բոլոր դարերում օրինակ են եղել շատերին: Նա քրիստոնեական եկեղեցու ավանդության մեջ հանդես է եկել որպես Հիսուս Քրիստոսի նախատիպար (ստվեր): Այդ պատճառով էլ Հայ Եկեղեցին Մեծ Պահքի շրջանում բոլոր ուրբաթ օրերի ճաշու ընթերցվածքները Հոբի գրքից է վերցրել՝ որպես Քրիստոսի չարչարանքների նախատիպ, իսկ Ջատիկի ճրագալույցի ընթերցվածքը՝ որպես Քրիստոսի Հարության նախակարգապետ: Տաթևացին Հայ Եկեղեցու սուրբերից է: Սրբադասունը կատարվել է Սիմեոն Երևանցու կողմից: Նրա հիշատակը տոնում են Մեծ Պահքի չորրորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ Հովհանն Օձնեցու, Հովհան Որոտնեցու, Երուսաղեմի Հովհաննես հայրապետի հետ:

6. Հոբի գիրքը եբրայական բանաստեղծության լավագույն նմուշներից է, բաղկացած է հինգ մասերից: Նախաեզրապայան գրվածք լինելու պատճառով Հոբի գիրքն ընդգրկվել է Աստվածաշնչի կանոնի Գ խմբավորման մեջ: Այն իմաստասիրական մյուս գրքերից (Սաղմոսաց, Առակաց, Երգ Երգոց, Ժողովող, Սողոմոնի և Սիրաքի Իմաստություններ) տարբերվում է իր «բեմականացված» խոսքով: Այն գրված է «հարց ու պատասխանի» ձևով, «բեմականացված» ճառերի և վեճերի ամբողջություն է, որի մասին ակնարկում է նաև Իսիքիոս Երուսաղեմացին:

7. Տաթևացին, ծանոթ լինելով և օգտվելով Հոբի գրքի՝ Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունից, ինչի մասին տեղեկություն կա երկի հիշատակարանում, բնականաբար, ծանոթ է և օգտվել է նաև Իսիքիոս Երուսաղեմացու Հոբի գրքի մեկնությունից, քանի որ վերջինս մեզ է հասել Վանական Վարդապետի երկի շնորհիվ:

8. Ուսումնասիրության ընթացքում կատարվել են ձեռագրագիտական մի շարք ճշգրտումներ. Գրիգոր Նարեկացու *Ո՞վ է դա-ի* մեկնության՝ մինչև այժմ հայտնի միակ օրինակի (Վենետիկ 1030 (հին՝ 339)) հետ համեմատելով գտանք, որ ՄՍ 1138 և ՄՍ 1426 ձեռագրերում տեղ գտած *Ո՞վ է դա-ի* մեկնությունները Գրիգոր Նարեկացու մեկնության խմբագրված տարբերակներն են:

9. Տարբեր գրչագրերում Հոբի գրքի մեկնությունների *պատճառ*-ների նմանությունների և տարբերությունների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերեցինք Հոբի գրքի՝ Որոգիների մեկնության *պատճառ*-ը, որին մինչ այժմ անդրադարձ չի կատարվել հայ մատենագրության մեջ: Այս *պատճառ*-ի ազդեցությունն է կրել նաև Գրիգոր Տաթևացու լուծմունքը, որի մասին խոսվում է նաև ՄՍ 1138 և ՄՍ 1426 ձեռագրերի Գրիգոր Նարեկացու *Ո՞վ է դա-ի* մեկնության վերջին հատվածում: Այն օգտագործված ենք տեսնում Տաթևացու լուծմունքում:



10. Որոգիմեսի անունով Յոթի գրքի հայերեն մեկնությունն մեզ չի հասել: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահպանվել են նրա մեկնության *պատճառ*-ը (ՄՄ, ձեռ. 1981, ք. 209աբ) և ՄՄ 1138 ձեռագրի «Ի բանեն Յոթայ Բարսղի ասացեալ» նշագրման մեջ առկա Որոգիմեսի` Յոթ ԼԸ 16, 23, 31 համարների մեկնության հատվածները, հանգում ենք այն եզրակացության, որ հայ իրականության մեջ եղել է Յոթի գրքի` Որոգիմեսի մեկնության ամբողջական տարբերակը:

11. Համադրելով Յոթի գրքի` Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունը, Գրիգոր Տաթևացու լուծմունքը և ՄՄ 1138 ձեռագրի «Ի բանեն Յոթայ Բարսղի ասացեալ» գրառումը` եկանք այն եզրակացության, որ Յոթի գրքի` Եփրեմ Ասորու մեկնությունն ամբողջական է եղել: Վանական Վարդապետն օգտվել է դրանից իր ամբողջ մեկնության ընթացքում, սակայն ՄՄ 1166 ձեռագրում Եփրեմի և այլ հեղինակների անուններով լուսանցային նշումներ կան մինչև 76ա թերթը:

12. Բնագրագիտական քննությամբ պարզեցինք, որ Յոթի գրքի` Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քոբայրեցու մեկնությունները ևս ամբողջական են եղել, որովհետև Գրիգոր Տաթևացին նշված հեղինակների ուղղակի մեջբերումներն անուն է Յոթի գրքի վերջին գլուխները մեկնելիս, իսկ Վանական Վարդապետը, թեև այս հեղինակներին վերաբերող լուսանցային նշումներ չունի, բայց ունի միևնույն հատվածների ձևակերպումներում նշված հեղինակներից քաղված մեկնություններ, որոնք որոշ փոփոխություններով միահյուսել է իր խոսքին:

13. Բարսեղ Մեծի անունով հայ մատենագրության մեջ հայտնի չէ Յոթի գրքի մեկնություն, սակայն ուսումնասիրելով Յոթի գրքի` Տաթևացու լուծմունքը և ՄՄ 1138 ձեռագրի «Ի բանեն Յոթայ Բարսղի ասացեալ» միավորը` պարզեցինք, որ եղել է Բարսեղ Մեծի անունով մեկնություն կամ այլ միավոր (ճառ, նամակ), որից օգտվել է Տաթևացին: Այս երկու գրվածքները համեմատելով Վանական Վարդապետի երկի հետ` եկանք այն եզրահանգման, որ Վանականը նույնպես օգտվել է Բարսեղ Մեծին պատկանող գրվածքից, սակայն Բարսեղի անունը չի նշում: Ենթադրում ենք, որ Վանական Վարդապետի լուսանցային *այլ, այլք* նշումների որոշ մասը վերաբերում է Բարսեղ Մեծին:

14. Յոթի գրքի` Գրիգոր Տաթևացու լուծմունքի, Վանական Վարդապետի քաղվածո մեկնության և «Ի բանեն Յոթայ Բարսղի ասացեալ»-ի համեմատական վերլուծությունը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Վանական Վարդապետը *այլ, այլք* լուսանցային նշումների ներքո թաքցրել է նաև Փիլոն Եբրայեցու և Որոգիմեսի անունները:

15. Եղիշեի, Համամ Արևելցու և Գրիգոր Նարեկացու Յոթ ԼԸ-ԼԹ գլուխների մեկնության հատվածների և Յոթի գրքի Գրիգոր Տաթևացու լուծմունքի համապատասխան համարների համեմատությունը ցույց տվեց, որ Գրիգոր Տաթևացին օգտվել է նշված հեղինակների երկերից` դրանց նոր շունչ հաղորդելով և նորովի մեկնաբանելով:

16. Առաջին անգամ կատարելով խնդրո առարկա լուծմունքի աստվածաբանական վերլուծություն` տեսնում ենք, որ Յոթի գիրքը Տաթևացու համար առիթ է բացահայտելու Հայ Եկեղեցու դավանաբանության հիմնական դրույթները: Դավանաբանական հարցերը սփռված են երկի էջերում: Համակարգելով դրանք` բացահայտում ենք բոլոր այն դավանաբանական-աստվածաբանական խնդիրները, որոնք Հայ Եկեղեցու հիմքն ու առանցքն են կազմում: Նա անդրադարձել է արարչագործությանը, երրորդաբանությանը, քրիստոսաբանությանը, փրկագործությանը, մարեմաբանությանը, վախճանաբանությանը, հրեշտակաբանությանը, մեղքին, քրիստոնեական

առաքինություններին, եկեղեցու հորհուրդներին, քրիստոնեական կենցաղավարությանը և այլ հարցերի:

Յոթի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքն իր դավանաբանական-աստվածաբանական ընդգրկուն նյութով բյուրեղացնում է Հայ և Ընդհանրական եկեղեցիների հոգևոր ժառանգությունը, գիտական մակարդակի վրա է դնում Հայ եկեղեցու դավանանքը, հստակեցնում է աստվածաբանական համակարգը:

17. Գրվածքն ուշագրավ է նաև լեզվաբանական տեսանկյունից: Տաթևացին կարողացել է օգտագործել հայերենի ընձեռած բոլոր հնարավորությունները: Մեկնությունը շարադրելիս նա ստեղծել է նոր բառեր, օգտագործել է բառերի նոր հոմանիշներ, լեզուն արտահայտիչ և պատկերավոր է, աստվածաբանական երկուն կարողանում է գեղարվեստական պատկերավոր խոսք հյուսել՝ օգտագործելով համեմատություններ և մակդիրներ, ունի հռետորական, մանկավարժական ձիրք, մեկնաբանական-ստուգաբանական փայլուն միտք:

18. Մեծ է Գրիգոր Տաթևացու ողջ ժառանգության ազդեցությունը հետագա դարերում ստեղծված երկերի վրա: Նրա Յոթի գրքի լուծմունքն իր ազդեցությունն է թողել ԺԸ դարի եկեղեցական գործիչ Պետրոս արք. Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցու՝ «Գիրք Մեկնութեան գրոցն Յովբայ» ամբողջական մեկնության վրա:

19. ԺԸ դարի եկեղեցական գործիչ Պողոս Տյուրիկեցու՝ «Պարզաբանութիւն առաջին եւ երկրորդ գլխոյ սքանչելի բանիցն երանելոյն Յօբայ արդարոյ» նորահայտ մեկնությունը փոքրածավալ է: Այն Գրիգոր Տաթևացու երկից լուրջ ազդեցություն չի կրել:

20. Գրիգոր Տաթևացու ընդգրկուն մտահորիզոնը, ճկուն միտքը, ի թիվս աստվածաբանական հարցերի, լուծմունքում պատասխան է տալիս նաև փիլիսոփայական, բնագիտական, աստղագիտական, լեզվաբանական, աշխարհագրական շատ հարցերի:

21. Գրիգոր Տաթևացին, ապրելով ունիթորական շարժման խառնակ ժամանակաշրջանում, չէր կարող չպայքարել կաթոլիկության և աղանդավորության դեմ: Յոթի գրքի լուծմունքում արծարծվում են նաև նման հարցեր, և բացահայտվում են հերձվածողական գաղափարների թյուրությունը, ընդգծվում Հայ եկեղեցու դավանանքի ճշմարտացիությունը: Այս առումով Յոթի գրքի՝ Տաթևացու լուծմունքը խիստ այժմեական է և օգտակար աղանդավորականության դեմ պայքարելու համար:

***Աստեմախտության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.***

1. Սարիբեկյան Է., Գրիգոր Տաթևացու Աստվածաշնչային մեկնությունները, Հայ Աստվածաբան, Ե, Աստվածաբանության ֆակուլտետ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 38-48:
2. Սարիբեկյան Է., Յոթի գրքի՝ Իսիքոս Երուսաղեմացու և Գրիգոր Տաթևացու մեկնությունների աղբյուրները, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, N3 (144), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 3-11:
3. Սարիբեկյան Է., Գրիգոր Տաթևացու Յոթի գրքի լուծմունքի ազդեցությունը Պետրոս Բերդումյանի նույնանուն մեկնության վրա, Կանթեղ, Գիտական հոդվածներ, 4(61), Երևան, «Ասողիկ», հրատ., 2014, էջ 154-164:

**САРИБЕКЯН ЭЛЯ ГРАЧЕВНА**  
**ТОЛКОВАНИЕ НА КНИГУ ИОВА ГРИГОРА ТАТЕВАЦИ**

*Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 25.00.01 "Теория и история религии (религиоведение)"*

*Защита состоится 8-го апреля 2015 г. в 14<sup>00</sup>, на заседании специализированного совета ВАК Богословии 068 при Ереванском государственном университете (Ереван 0025, Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус).*

**РЕЗЮМЕ**

Целью данной работы является изучение Толкования Ветхозаветой книги Иова Григора Татеваци, богослова, церковного деятеля XIV-XV веков. Текст Толкования еще не напечатан, оригинал хранится в Матенадаране имени Месропа Маштоца (рук.1115).

Диссертация состоит из трех глав, заключения, списка литературы и источников (161 ст.), из трех приложений (25 ст.). В приложении представлено еще неизданное предисловие Толкования Оригена на книгу Иова, а также отрывки из неизданных Толкований Григора Татеваци и Ванакана Вардапета на книгу Иова.

В первой главе представлена история Армении в эпоху жизнедеятельности Григора Татеваци. В новом свете представлена его педагогическая и церковная деятельность. Составлен список опубликованных и неопубликованных сочинений автора.

Во второй главе представлены особенности книги Иова, стиль Толкования Григора Татеваци, выяснены источники Толкования Татеваци и показана его уникальность и научная ценность.

В третьей главе представлен богословский анализ Толкования Татеваци, выявлены и представлены богословские взгляды Татеваци, изучена лингвистическая характеристика Толкования и его воздействие на последующую армянскую литературу.

Составлен список рукописей, содержащих Толкование на книгу Иова Григора Татеваци. Это сочинение Григор Татеваци написал в конце своей жизни, когда переехал из Татевского монастыря в монастырь Мецоп для основания там духовной семинарии. В Памятной записи Толкования Григор Татеваци пишет, что его целью было сделать доступной книгу Иова для учеников. Это желание он исполняет в монастыре Мецоп.

В памятной записи Татеваци упоминает, что в своей работе он обращался к творениям отцов церковных. До сих пор исследователями были установлены параллели только с Толкованием Ванакана Вардапета. Между тем Татеваци в памятной записи сочинения подчеркивает, что пользовался сочинениями разных толкователей. В итоге сопоставления исследования источников сочинения с неизданными разными толкованиями, обнаружили все те источники, из которых посредственно и непосредственно пользовался Татеваци. Во время изучения обнаружилась так же сама причина толкования Оригена на книгу Иова (ММ, рук. 1981, с. 209аб). Толкования 38-39 глав книги Иова в армянской библиографии известны под заголовком – Кто это? Толкование этих глав до нас дошли под именами Егише, Амам Аревелци и Григор Нарекаци. Сии толкования были сравнены с толкованием указанных глав Григора Татеваци. В итоге этого сравнения были найдены, по сей день известный, как единственная рукопись Григора Нарекаци (Венеция, N 1030), два кратких варианта, благодаря которым, восстанавливаются многие поврежденные отрывки венецианской рукописи.

В нашей работе, в числе источников толкования, выявлены причины толкований Оригена, Ефрема Сирина, Исихия Иерусалимского и Степаноса Сюнеци. В своем Толковании Татеваци упоминает также имена Василия Великого и Филона Александрийского. Сравнительный анализ толкований Григора Татеваци и Ванакана Вардапета выявил сходство, отличие и стилистические особенности этих текстов.

В диссертации рассматриваются также не систематизированные, а рассеянные на разных страницах Толкования богословские взгляды Григора Татеваци. В сочинении Татеваци нашла отражение богатая лексика. В тексте широко использованы синонимы, иноязычная диалектная лексика, неологизмы. Речь автора насыщена сравнениями, яркими описаниями. Татеваци обращается и к народным преданиям.

Было изучено воздействие Толкования на армянскую литературу последующего времени. Следы влияния сочинения Григора Татеваци несут на себе Толкования Петроса архиепископа Бердумяна (целиком) и Погоса Тюрикеци (главы первая и вторая).

В XVIII веке продолжается в более просторном варианте традиция толкования Библейских книг. Толкователи стремились сделать более доступными идеи высказанные в Книге Иова.

Диссертация заканчивается выводами.

ELYA SARIBEKYAN  
GRIGORY OF TATEV'S WORK "THE COMMENTARY ON THE BOOK OF JOB"

*Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of  
"Theory and history of Religion (Religion studies)" 25.00.01.*

*The defense of the dissertation will be held on 8 April, 2015, at 14<sup>00</sup> in the session of the  
Specialized Council 068 on Theology of SQC RA at the Yerevan State University (0025,  
Abovyan 52, YSU, 6h building)*

**SUMMARY**

This thesis is devoted to the "The commentary of the book on Job" by an Armenian church father Grigor of Tatev (14-15 c. AD). The commentary is unpublished yet and its original manuscript is kept at the Matenadaran (Institute of ancient manuscripts in Yerevan).

The thesis (dissertation) consists of introduction, three main chapters, conclusion, list of sources and bibliography (161 pages) in addition to that the work has three appendices (25 pages). The appendices contain the parts of Job's commentary of Origen, passages from Grigor of Tatev's unpublished manuscript entitled "The interpretation of the book of Job" and Vanakan Vardapet's citations of yet unpublished commentary on the book of Job.

The first chapter describes the historical period of Grigor of Tatev, connecting it with his life and works. His pedagogical and teaching activity is represented in a new way and there is a list of his printed and unpublished books.

The second chapter describes the peculiarities of the book of Job, the style of the commentary of Grigor of Tatev and our efforts to reveal and specify those methods (interpretations, reasoning) that Grigor of Tatev used by showing his unique character and independent approach. The third chapter presents a theological analysis of the commentary. Grigor of Tatev's theological points of view contained in the work are revealed and systematized. Moreover, the reflection on the peculiarities of the linguistic styles of the work and the future influence of the author and his work is brought to reader's attention.

On the basis of the present lists of manuscripts which are preserved at the Matenadaran, the library of the manuscripts of the Armenian Patriarchate of Jerusalem, the library of the manuscripts of the Mechitarist Congregation of Venice, and the library of manuscripts of the Zmmar monastery, Lebanon, a complete list of the manuscripts of the commentary on the book of Job has been compiled. Grigor of Tatev wrote this work in the last year of his life, when he came to the monastery of Metsop from the monastery of Tatev to form a university and to teach there. In the colophon of this work he writes about his desire to write a commentary on the intricate parts of the book of Job and to teach his students. He realized his desire in the monastery of Metsop. From certain researchers point of view, Grigor of Tatev used only Vanakan Vardapet's commentary on Job, while in the colophon of this work Gregor of Tatev mentions the usage of various commentaries. As a result of examining the sources and comparing them with different manuscripts we revealed all the sources that Grigor of Tatev used, whether directly or indirectly. During our research we discovered the usage of Origen's commentary on the book of Job (manuscript 1981, 209), the usage of Ephrem the Syrian's commentary along with the commentaries of Hesychius of Jerusalem and Stepanos of Syunik.

The chapters 38 and 39 of the book of Job are known in the Armenian Church literature under the title “Who is that”. Some of our major church fathers such as Yeghishe, Hamam Areveltsi and Gregor of Narek have written commentaries on the above mentioned chapters. Their commentaries were compared with the same chapters of the work of Grigor of Tatev and the similarities along with the differences of the content and style were shown. In result of this comparison we were able to discover two other concise versions of Grigor of Narek’s only known manuscript (Venice 1030, old 339), which help us to correct and restore the discrepancies of the previous manuscript, done by a Venetian author. Owing to Vanakan Vardapet’s yet unpublished commentary, we possess some portions of the commentaries of Hesychius of Jerusalem (until ch. 21) , Ephrem the Syrian, Stephanos of Syunik and Davit of Qobayr. Vanakan Vardapet’s commentary is a complete work that consists of some fragments from the above mentioned church father’s commentaries. It is worth mentioning that the actual input of Vanakan Vardapet in his work is very little. The names of the commentary are written in marginal notes, and they comment until the 28th chapter of the book of Job. The commentary of Grigor of Tatev was compared with Vanakan Vardapet’s commentary and the differences, along with the similarities and stylistic peculiarities were revealed. The comparison of Grigor of Tatev’s and Vanakan Vardapet’s corresponding parts of MM 1138 manuscript entitled “The words of Basil about Job”, helped us to reveal the authors of the citation, which are Basil the Great, Philo and Origen.

In the dissertation we also reflected upon the theological views of Grigor of Tatev, which are not outlined in the work, yet are found in different parts of the commentary. In this work Grigor of Tatev reflected upon many crucial aspects of the theology of the Armenian Church, such as Holy Trinity, Christology, the attributes of God, Holy Spirit, Redemption, Creation, Sin, Christian ethics and morality, sacraments of the Church, theodicy, questions regarding heresies and cults, etc.

We consider it necessary to reflect upon the peculiarities of linguistic styles of this work. Being a skillful linguist, Grigor of Tatev was able to use grammatical and stylistic potential of the Armenian language in the best possible way, he even formed new words and used new synonyms, foreign and dialectical terms. Author also used a very rich language of comparisons and picturesque descriptions along with the words of folklore wisdom.

The future influence and legacy of Grigor of Tatev’s commentary on the Armenian literature is quite noticeable. We tried to emphasize it by analyzing the later commentaries on the book of Job written by Archbishop Petros Berdumyan, Aghamalyan of Nakhijevan and Poghos of Tyurik. Archbishop Berdumyan’s work is complete and in it we come across to a unique biographical order which we identify as a new innovative genre in the Armenian commentaries of the book of Job. There is another innovation in the above mentioned commentary; a specific biblical passage is compared with an event chosen from the history of Armenia. Poghos of Tyurik’s commentary consists of two chapters of the book of Job. Comparing some parts we observed stylistic peculiarities and differences. In the 18th century the tradition of commentaries on certain biblical books was continued with lengthier explanations. The commentators tried to make their works more comprehensive and simplify all the difficult passages of the book of Job.

